

631.141  
n-79

# ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՋԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՅՐՈՒԲԵՆԸ

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՍՊՈԿՆԱ

1926

30 JUL 2010

631.4  
On-79

Ն. Պ. ՌՈՒԴԻՆ

Վ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ  
ՀՈՂԱԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՅԲՈՒԲԵՆԸ

Խմբագրությամբ  
Հայաստանի Ս. Խ. Հ. Հող-  
ժողկոմատի Խմբ-Հրա-  
տարակչ. Կոլեգիայի

9001



ԽԱՆՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

1926

I. ԳՅՈՒՂԱՑԻՔ ԻՐԵՆՔ ՊԵՏՔ Ե ՀՈԴ ՏՈՆԵՆ ԻՐԵՆՑ ՀՈՂԵՐԻ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ.

Համաշխարհային պատերազմն ու նրանից հետո քաղաքացիական կոլլեգերը չափազանց քայլայեցին ու թուլացրին գյուղացիական տնտնսությունը։ Նորից նրան վոտքի դնելու ու բարելավելու համար ամենից առաջ պետք ե հողը կարգի բերել։ Առանց գրան՝ ծախս անել տնտեսությունը բարելավելու համար, կնշանակե աշխատանքն ու փողը ջուրը քցել։

Հողը կարգավորելու մասին առաջին հերթին պետք ե մտածեն, հոգ տանեն ու աշխատեն գյուղացիք։ Ի հարկե պետությունը նրանց կողնի իրեն ուժերով, որենքներով, հողաչափերով ու գյուղատնտեսներով։ Բայց յեթե գյուղացիք իրենք չլծվեն հողաշինարարության գործին, չհասկանան նրա ոգուտն ու շահը և այն չհամարեն իրենց ապրուստի գլխավոր գործը, վոչ մի ոգնություն այստեղ նրան չի փրկի։ Հողաշինարարությունն ամենից առաջ հենց իրեն՝ գյուղացիության գործն եւ։

Գիտությունն ու կյանքի հասարակ հաշիվերը ցույց են տալիս, վոր բարեկարգված հողի վրա տնտեսությամբ պարապելը մի քանի անգամ ավելի հարմար ե ու ձեռնտու, քան չբարեկարգված հողի վրա։ Այս պատճառով ել ամեն մի գյուղ պետք ե ստուգի, կանոնավո՞ր գրության մեջ ե գտնվում իր հողերը, թե՞ չե։ Յեթե նրանցում անկարգություն նկատվի, այդ դեպքում գյուղը պետք ե հողաշինարարության անցնի անմիջապես, առանց հետաձգելու այդ գործը հեռավոր ապագային։

Напечатан в типографии Госиздата  
„Красный Пролетарий“. Москва,  
Пименовская ул., д. № 16,  
в количестве 3000 экз.  
Главлит № 64079

Ա. ՎՈՐՆ Ե ՀՈՎՈՅՑԻՆ ԱՆԲՈՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ:

Գյուղացիական հողերի ոգտագործման մեջ չափազանց շատ և ամեն տեսակի անբարեկարգություններ կան:

Առաջին անբարեկարգությունը հողացրվածուրյունն է: Բոլոր գյուղերում ամեն մի ծուխ հանդի զանազան մասերում ունենում է շատ, իսկ յերեխն մի քանի տասնյակ հողամասեր: Այդ հողամասերը լինում են մանր և մեծ մասամբ անկանոն ձևերով: Պատահում ե, վոր գյուղացու հողամասի մեջ սուր սեպի նման կամ նեղ շերտով մտնում է հարևանի հողամասը կամ թե մանր հողամասերը մտնում են իրար մեջ:

Տերությունը անբարեկարգությունը՝ հողերի հեռու ընկած լինելին է: Այս դեպքում հողի առանձին կտորները կամ դաշտի ծայրերն ընկած են լինում բնակավայրերից վերստերով հեռու ու հողատերերը իրենց հողերը գնալու համար ստիպված են լինում չափազանց յերկար տարածություններ կտրել:

Տերությունը անբարեկարգությունը հողերի ասհմանների անկանուրյունն է: Քիչ ե պատահում, վոր հողաբաժնը լինի կլոր, քառակուսի կամ ուղղանկյուն: Մեծ մասամբ սահմաններն անկանոն են. զանազան վորումներով, սեպածե ու ծոմուծե:

Չորրությունը անբարեկարգությունը կայանում է նրանում, վոր հաճախ գյուղի հողաբաժնում պակասում են վորու հողատեսքեր: Որինակ, պակասում ե արոտատեղը, խոտհարքը և այլն: Կան գյուղեր, վոր ուժասպառ են լինում առանց արոտատեղերի, իսկ մյուսներում այդ արոտատեղերն այնքան շատ են, վոր ամբողջովին չեն ոգտագործվում: Քիչ կարելի յե հանդիպել այնպիսի գյուղի, վորտեղ տնտեսության համար անհրաժեշտ հողատեսքեր՝ (հարմար տնտեսեղեր, վարելահող, խոտ-

հարք և արոտատեղի) լինեն: Յեղած դեպքում ել նրանք կանոնավոր դասավորված չեն:

Հինգերությունը անբարեկարգությունը՝ ջրային հարցի անապարեկարգությունը է: Կան շատ գյուղեր ու տնտեսություններ, վորտեղ ջուրը կամ չի բավարարում անտեսության կարիքներին, կամ հատկությամբ վատն ե, անպետք ու անառողջ: Շատ գյուղեր տանջվում են՝ անասուններին ջրելու տեղ չունենալու պատճառով: Մյուսներում լճակներն ու ջրհորները չորանում են, մի քանիսում ել վատ ջրի պատճառով անվերջ են ամեն տեսակի հիվանդությունները:

Վեցերությունը անբարեկարգությունը՝ մեր գյուղերում ճանապարհների բացակայությունն է: Մենք միջզյուղա ու մանավանդ դաշտի ճանապարհները քիչ ունենք: Յեղածներն ել մեծ մասամբ վատ են: Շատ գյուղերում վորոշ հողամասերին մոտենալու կարճ ճանապարհ չկա. Նրանց համելու համար պետք ե հեռավոր պտույտներ անել կամ անցնել ուրիշ հողերով: Մեր վատ ճանապարհներին սայլերը ջարդվում, մեքենաները փչանում, իսկ մարդիկ ու տավարը տանջվում են:

Յոթերությունը անբարեկարգությունն այն է, վոր գյուղերը համարյաթե միշտ լաց են լինում և ակավանությունն ից: Բայց հաճախ հենցնույն տեղում իրենց կողքին դատարկ ընկած են վայրի ու անխնամ հողեր: Կան շատ ճաճիճներ, վորոնց կարելի յե լավ մարգագետիններ դարձնել: Կան չոր, անբերբի տեղեր, վորոնք ջուր են պահանջում՝ վերակենդանանալու ու պաղարեր դառնալու համար:

Ութերությունը անբարեկարգությունը՝ մեր գյուղերից շատերում բազմաթիվ տներից բաղկացած մեծ հասարակությամբ տնտեսություն վարելն է: Կան գյուղեր, վորտեղ տները հաշվում են հարյուրներով, մինչև անգամ հա-

զարներով: Այդպիսի գյուղերում ժողովսերն ել կայանում են հազարավոր մարդկանցով, վորոնք դժվարանում են իրար մեջ համաձայնության գալ գյուղական բարդ խընդիրների վերաբերյալ: Մինչև վոր այդպիսի գյուղերը չբաժանվեն փոքրիկ գյուղամասերի ու գյուղակների, հողային ու տնտեսական գործերի շուրջը մշտական վեճեր ու դժգոհություններ են տեղի ունենալու: Այդ գյուղերի դաշտերի ծայրերը շատ հեռու յեն: Մի խոսքով այդպիսի հողերը կառավարելը շատ դժվար ե ու անհնարին:

Իններորդ անբարեկարգությունը հողի իրավունքի ու առանձին վեճերն են: Շատ հասարակություններ ու առանձին տնտեսություններ դատ են վարում հողի համար՝ առանց իմանալու իրենց իրավունքներն ու սահմանները: Ել ինչ տնտեսություն, յերբ չգիտես, թե ո՞ւր և ինչպես կարող ես տնտեսություն վարել: Դատավարության ընթացքում վիճելի հողը մեծ մասամբ մնում ե անմշակ ու առանց յեկամուտի: Փոխանակ խաղաղ ու բարեկամական հարեանության, գյուղացիների մեջ վեճեր ու կոփվեր են տեղի ունենում: Դատավարության համար փող են ծախսում ու աշխատանքի թանկագին ժամանակը կորցնում: Մինչև վոր ամեն գյուղ, յուրաքանչյուր տընտեսություն չիմանա իրա հողային անվիճելի իրավունքը ու հաստատ սահմանները, հանդիսատ տնտեսությամբ պարապելը հնարավոր չի լինի:

Վերջապես, տասոյերորդ անբարեկարգությունն այն ե, վոր շատ գյուղերում հողի կանոնավոր յիքաժանված: Գյուղական մի քանի ընտանիքներ ուժասպառ են լինում առանց հողի, կամ քիչ ու վատ հողաբաժին ունենալուց, իսկ մյուսները նույն գյուղում մեծ ավելցուկ ու լավ հողեր ունեն: Կանոնավոր հողաբաժանության դեպքում աղքատ ու միջակ տնտեսությունները կարող են վոտքի կանգնել ու ամրանալ:

Այսպես, մենք թվեցինք հողային անբարեկարգությունների մի ամբողջ տասնյակ, չհաշված տնտեսական ուրիշ տեսակի խառնաշփությունները: Հիմա առանձին առանձին քննենք նրանց պատճառում վասուները և աշխատենք հասկանալ, թե ինչու ձեռնտու յեւ և պետք ե այդ անբարեկարգություններից ազատվել: Ուրիշ խոսքով՝ բացատրենք հողաշինարարություններից սպասելիք ոգուտը գյուղացիական տնտեսության համար:

III. ԻՆՉՈՐԴ ՀՈՂԱՑԻՆ ԱՆԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՐՆՏՈՒ ԶԵՐՈՒԾՈՒ ՀԱՅՈՒՅԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

1. Ինցու յեւ վեաաակար հողացրվածությունը: Դա վսասակար ե այն պատճառով, վոր այդ դեպքում շատ ժամանակ ու աշխատանք ե կորչում մի շերտից մյուսը, հողաբաժնի մի կտորից մյուսը անցնելու համար: Բացի այդ, նման դեպքում հողատերը չի կարողանում իր հողն այնպես նայել ու պահպանել, ինչպես կարող կլինի խնամել, յեթե հողը մի տեղ լինի հավաքված: Նեղ ու փոքր հողաշերտերում արորը հազիվ ե շուռ գալիս, իսկ մեքենայով մշակելու մասին մտածելն անգամ հնարավոր չի: Նեղ ու փոքր շերտերն ստիպված են լինում վարել միշտ յերկարությամբ, մինչդեռ կանոնավոր մշակությունը պահանջում ե հողը վարել թե լայնությամբ և թե յերկարությամբ: Հողի մանր շերտերով ընկած լինելու դեպքում միջնակների համար շատ հող կորչում: Այդ միջնակներում առատորեն աճում ու տարածվում են վսասատու խոտերը: Նեղ ու մանր հողամասերը գնալու համար ստիպված են լինում անցնել ուրիշների հողաբաժններով, վորովհետև ամեն մի մանր շերտ իր ճամբան չունի:

Հողի մանր շերտերով ընկած լինելը բոլոր հողատերերին պահում ե կարծես թե ցանցի մեջ: Նըանցից վոչ մեկը չի կարողանում իր նեղ ու փոքրիկ հողաշերտում

բարելավություն մտցնել, մինչև վոր այդ մասին ամբողջ համայնքը չմտածի: Առանձին հողատերերի աշխատանքը իզուր կորչում ու նրանց բարելաված ցանքսերն ու տընկարանները փշանում կամ վոտնատակ են լինում: Այդ բոլոր թերությունները կվերանան, յերբ գյուղի ու տընտեսության հողը կհավաքվի մի տեղ կամ մի քանի հողամասերում, և նրանք ել կլինեն տիրոջ ձեռքի տակ ու աչքի առաջ: Այդ ժամանակ ամբողջ հողն առանց ավելորդ միջնակների կոդտագործվի մշակության համար:

Հողացրվածությունը վերացնելու դեպքում կոչնչանան և վասաստու խոտերը: Լայն շերտը կարելի կլինի վարել ու ցանել մեքենաներով: Թվով քիչ ու լայն հողաշերտերի մեջ հարմար ճանապարհներ անցկացնեն ավելի հեշտ ե: Իսկ վո՞րքան աշխատանք ու ժամանակ կիսնայվի, յերբ փոխանակ մի քանի տասնյակ նեղ ու մանր հողաշերտեր անցնելու, հող ոգտագործողն անցնի մեկ-յերկու հողամաս:

Հաշված ե, վոր մեծ գյուղերում խիստ հողացրվածության պատճառով ամեն մի գյուղացի ամառվա ընթացքում իր մանր հողակտորները գնալ գալու համար հարյուրավոր վերստեր ե անցնում: Աշխատանքի, ժամանակի և ուժի այդպիսի կորուստը ամեն անգամ առանձնապես աչքի չե ընկնում: Իսկ յեթե այդ բոլոր միասին գումարենք, կարելի յե ուղղակի ապշել, թե վորքան թանկագին աշխատանք ու ժամանակ ե կորչում ամբողջ գյուղում, ինչքան շատ են տանջվում—ուժասպառ լինում թե մարդիկ և թե անասունները:

Թող ամեն մի գյուղացի հաշվի առնի, թե ինչքան թանկագին բանվորական որեր ե կորցնում թե ինքը և թե յուր անասունները հողացրվածության դեպքում, և թե ինչպիսի վասաներ ու անհարմարություններ են լինում տնտեսության համար: Այն ժամանակ նա պարզ կհասկա-

նա, վոր հողացրվածությունը նրա վոխերիմ թշնամին ե, վորը փչացնում ե իր հողն ու աշխատանքը. Նրա դեմ պետք ե կռվել, պետք ե վոչնչացնել նրան, պետք ե գյուղի ամբողջ հողը մի տեղ հաստատել, իսկ առանձին տների հողը վեր ածել սակավաթիվ լայն ու հարմար շերտերի: Մի խոսքով՝ ձեռնտու յե այդ գործի մասին մտածել ու հոգ տանել:

Իզուր չե, վոր այն գյուղացիք, վորոնք կռվել են հողացրվածության դեմ ու հաղթահարել են նրան, ասում են, վոր իրենց աչքները բացվել են և հողը կենդանացել ե:

Թող կորչի հողացրվածությունը իր նեղ, մանր, անձև կամ յերկար շերտերով: Կանոնավոր տնտեսություն ստեղծելու առաջին քայլը լայն հողաշերտերին անցնելու մեջ ե,

2. Ի՞նչո՞ւ յե վեհասակար հողի հեռավորությունը: Դա վասակար ե մասսամբ այն պատճառով, ինչ պատճառով վոր վասակար ե և հողացրվածությունը: Հողերի հեռու ընկած լինելու դեպքում հողոգտագործողները շատ իզուր ժամանակ են կորցնում իրենց ընակավայրերից հեռու ընկած հողամասերը գնալ-գալու համար: Վնասակար ե դա և այն պատճառով, վոր հեռու ընկած հողամասերը մնում են առանց ինամբի, տիրոջ աչքից հեռու: Բայց ամենից մեծ վասը նրանումն ե, վոր հեռու ընկած հողերը վատ են մշակում և լրիվ յեկամուտ չեն տալիս: Հողամասը հեռու լինելու պատճառով գյուղացիք հողը չեն պարարտացնում: Պարարտացնելն արդեն դժվար ե դառնում, յեթե հողամասը գյուղից յերեք վերստից ավելի հեռու յե ընկած:

Հեռավոր ու դաշտերի ծայրերին ընկած հողամասերը, մանավանդ չքավորների կողմից, թողնվում են առանց ուշադրության, մշակում են անխնա կերպով և կամ կապալով են տրվում շատ փոքրիկ վարձագնով: Հողի հեռա-

վորությունը խանգարում ե' գյուղացիներին բարելավելու իրենց տնտեսությունը։ Բարելավումը պահանջում է հաճախ դաշտ գնալ, կանոնավոր մշակել, հունձից հետո վարել աշնանացանի ու գարնանացանի համար։

Պետք ե խնամել բերքը, քաղնան անել ու բուկը տալ։ Պետք ե մեքենաներ, գործիքներ ու մեծ քանակությամբ աղբ տանել հողամասն ու այնտեղից ել մեծ բերք տուն բերել։ Շատ հեռու գտնվելու դեպքում դա անհնարին ե, կամ այնքան թանգ ե նստում, վոր տեղափոխության ժախքը տնտեսության ամբողջ արդյունքը կլանում ե, կամ նույնիսկ դառնում ե պարզապես մնասաբեր։ Ահա թե ինչու պետք ե կովել հողերի հեռավորության դեմ ու վերցնել այն։ Հողերի հեռավորությունը վերցնելու համար յերկու միջոց կա. յեթե գյուղը ցանկանում ե մնալ իր տեղում, պետք ե հողերը ժողովել գյուղի շուրջը. զրահամար հեռավոր հողերը պետք ե տալ այն գյուղերին, վորոնց մոտ են գտնվում, իսկ փոխարեն վերցնել հարևան գյուղերի այն հողերը, վորոնք իրենց մոտ են ընկած։

Յեթե գյուղը մեծ ե ու կարիք կա նրա մի մասը տեղահան անելու, այդ դեպքում պետք ե հեռու ընկած հողամասերի վրա գյուղակներ հիմնել։ Այդ ժամանակ հեռու հողերը նոր գյուղակին կիմնեն մոտ ու տնտեսությանը հարմար։ Մի խոսքով հարկավոր ե կամ հողը մոտեցնել տիրոջը, կամ տիրոջը մոտեցնել հողին։

Բակ յեթե վոչ մեկը և վոչ մյուսը չարվի, այն դեպքում հողը կմնա անմշակ ընկած, վոչ տիրոջն ոգուտ կտա և վոչ պետությանը յեկամուտ։ Պետք ե այդ հասկանալ ու շուտով ազատվել հողերի հեռավորությունից։

3. Ի՞նչու յեն վնասակար անկանոն ասհմանները։ Նրանք մնասակար են այն պատճառով, վոր թեք ու ծուռումուռ, յերկար սահմանի համար ավելի հող ե փչանում, քան ուղիղ միջնակների։ Անկանոն սահմանի

պատճառով հաճախ տեղի յեն ունենում ամեն տեսակի զավթումներ, վեճեր, հարևանի սահմանից վարել ու հնձել։ Վորքան յերկար ու անկանոն ե սահմանը, այնքան ավելի դժվար ե նրան հսկելն ու կանոնավոր պահելը։ Յեթե սահմանը սուր սեպածն ե ու կորություն ունի, այն դեպքում հողը հերկելիս ու մշակելիս շատ դժվար ու անհարմար ե լինում շարժվել։ Պետք ե աշխատել անկանոն սահմանը ուղղել, վորպեսզի անձունի ու խառնաշփոթ սահմանի տեղ հողաբաժինն ստանա կանոնավոր ու հարմար միջնակներ։

4. Ի՞նչու յե վնասակար, յերբ պիտանի հողատեսից պակաս են։ Դա մնասակար ե այն պատճառով, վոր նրանց պակասության դեպքում տնտեսությունն սկսում ե կաղալ։ Յեթե գյուղում ամբողջ հողը հերկված ու ցանված ե և խոտհարքներ ու արոտատեղիները քիչ են, անսառններ պահելը դժվար ե դառնում։ Իսկ յեթե անասուն չկա, չկա և աղք, Յեթե չկա աղք, չկա և բերք, Յեթե նման դեպքերում դժվար ե անցնել խոտերի ցանքսի, այն ժամանակ պակասը կարելի յե լրացնել նրանով, վոր փոխելով հարևանի հետ ավելորդ հողատեսակի մի մասը, նրանից կարելի յե ստանալ այն, ինչի կարիք ունեն իրենք։ Կարելի յե նույնպես խնդրել, վորպեսզի պահեստի հողային ֆոնդից կամ փոխանակեն անհրաժեշտ հողատեսքերը կամ կտրեն ու իրենց հողին միացնեն և կամ թե այն ֆոնդի մի մասը կապալով վերցնեն՝ տնտեսության պակասը լրացնելու համար։

5. Ի՞նչու յե վնասակար ցրի պակասությունը կամ նրա վատ հատկությունը։ Ջրի պակասությունը կամ նրա վատ հատկությունը մնասակար ե այն պատճառով, վոր առանց լավ ու առատ ջրի վոչ միայն կանոնավոր տնտեսություն վարել, այլև աղբել հնարավոր չե։ Այդ պակասությունից տանջվում են և մարդիկ, և անսառնները, և ցանքսերը,

մնասվում ե տնտեսությունը: Ժամանակ ե, վոր գյուղը մտածի բավարար չափով լավ ջուր ունենալու մասին, թե խմելու, թե անասուններին ջրելու և թե տնտեսության ուրիշ շատ կարիքների համար:

Շատ անգամ կանոնավոր ու փոքրիկ գյուղեր հիմնելուն խանգարում ե այն բանը, վոր չեն իմանում ինչպես ջուր ստանան: Բազմաթիվ որինակներ ցույց են տալիս, թե ինչպես լավ ու բավարար ջրի մատակարարումից միանգամից բարելավվում ե գյուղի տնտեսությունն ու բնակչության առողջությունը: Այդ պատճառով ել գյուղը պետք ե մտածի ու հոգ տանի ջրի մասին վոչ պակաս քան հողի մասին:

6. Ինչո՞ւ յէ վնասակար ճանապարհների պակասոյնը: Դա վնասակար ե այն պատճառով, վոր վատ ճանապարհներով յերթեեկելը, ճանապարհ չկինելը, կամ ուրիշի հողով ու շերտերով անցնելը չափազանց մեծացնում ե ուժի ու ժամանակի կորուստը: Արտասահմանում լավ, շահավետ տնտեսությունները աշխատում են, վորպես զի ամեն մի հողաբաժին ունենա իր ուղիղ ու հարմար ճամբան: Մեզ մոտ մեծ մասամբ այնպես ե, վոր մինչև իսկ իր հողերին մոտենալը դժվար ե գյուղացու համար: Անձանապարհ տեղերը համարյա թե կորած են. նրանք կամ մնում են առանց ոգտագործման կամ չափազանց քիչ յեկամուտ են տալիս: Մենք պետք ե աշխատենք վորքան կարելի յեքիչ վատնենք մեր աշխատանքը, ժամանակն ու միջոցները: Ամեն մի նման ծախս պետք ե ծառայի գործին և յեկամուտ տա:

Մի քանի որինակներով ցույց տանք վատ ճանապարհների վնասները:

Կանոնավոր ու խելացի անցկացրած ճանապարհով միենույն ձին միանգամից կարող ե շատ ավելի բեռ քաշել ու քիչ կհոգնի: Մարդիկն ել կինայեն իրենց ժամա-

նակը: Նրանք կշահվեն և նրանից, վոր լավ ճանապարհն ավելի քիչ բան կփչանա: Ներկայումս փչացած ճանապարհները գյուղին կարծես պահում ե բանակի մեջ: Իսկ վատ ճանապարհների վերանորոգման համար շատ մեծ ծախս ե լինում: Մի խոսքով հիմա վոչթե գյուղացիներն են տիրում ճանապարհներին, այլ ընդհակառակը, ճանապարհներն են բեռ դարձել գյուղացիների համար: Պարզ ե, վոր նման անկանոնություն չպետք ե լինի: Անհրաժեշտ ե աշխատել լավ ճանապարհներ ունենալ: Վոչ մի գյուղ չի կարող պարձենալ, թե իր հողը լավ ե կարգավորված, յեթե ամեն մի հողամաս չունի իր հարմար ճամբան:

7. Ի՞նչո՞ւ յե՞ն վնասակար անհարմար հողերը: Նրանք վնասակար են այն պատճառով, վոր մշակման համար անպետք են և պակասեցնում են տնտեսության յեկամուտը: Բացի դրանից, նրանք ծածկվում են անոգուտ բույսերով ու փչացնում հարմար հողերը: Այսպես՝ ճահիճներից փչանում են մարգագետինները և արոտատեղերը: Ցվրվող ավազները ծածկում են վարելահողերը: Զորերը տարից-տարի շատնանում են, կլանում հարմար հողերն ու չորացնում նրանց: Անոգուտ հողերը բերք չեն տալիս: Մինչդեռ շատ հողեր, վորոնք այժմս անհարմար են ու վնասաբեր, կարող են կարգի ընկնել ու դառնալ հարմար ու բերրի, յեթե նրանք խնամվեն: Փորցը ցույց ե տվել, վոր այդ գործը շահավետ ե և շատ շուտ արդարացնում ե ծախսերը:

Գիտության մեջ հիմա հայտնի յեն ամենապարզ միջոցներ, վորոնցով կարելի յե գեն ձգված հողերը բարելավել ու միացնել տնտեսությանը: Հողերի այդպիսի բարեկարգումը կոչվում ե հողերի բարելավում—մելիորացիա: Գյուղացիունը սկսում ե հասկանալ դրա ոգուտն ու միանում, կազմում ե ընկած հողերը բարելավող մելիորատիվ ընկերություններ: Զորացվում են ճահիճներն,

ամրացվում են ավագուտաները, ձորերը լցվում, փռողվում են չորացած վայրերը, հողը մաքրում են կոճղերից, տրմատներից, քարերից ու թփուտներից. հարկավոր ե միայն այդ գործում թափ առնել, և հողի ամեն մի թիզ կարգի կդա: Այն ժամանակ մեծ չափով կպակսի մեր սակավահողությունը և անհարմար հողերը կդադարեն վտանգ սպառնալ տնտեսությանն, իսկ պետությունը գյուղացիության ոգության կդա իր տեխնիքական ուժերով և դրամական վարկերով, յեթե կազմակերպվեն հողեր բարելավող ընկերություններ:

8. Ի՞նչու յե վճառակար մեծ գյուղերի մեջ ընդհանուր հողագործություն ունենալը. դա վնասակար ե այն պատճառով, վոր այդ գեպքում հողն ունենում ե չափազանց շատ տերեր, վորոնք խոնվում են միևնույն գործի շուրջը ու միմյանց խանգարում: Նա, ով ապրում ե մեծ գյուղում, ուր կան մի քանի հարյուր կամ հազար տուն, նա գիտե, թե վորքան դժվար ե որինական ժողով հավաքել ու համաձայնության գալ հողային-տնտեսական գործերի մասին: Վճիռը յեթե մեկի համար լավ ե, վատ և լինում մյուսի համար:

Տարբեր տնտեսություններն ունենում են և տարբեր կարիքներ: Յեթե մի քանի, մինչեւ անգամ մի քանի տասնյակ տուն մտածեն վորեե բարելավություն մտցնել տնտեսության մեջ, նրանք պիտի սպասեն, մինչեւ վոր այդ մասին համաձայնության գան և մյուսները: Այդպիսի մեծ գյուղերում դժվար ե ընդունել տալ և անցնել բազմադաշտ սերմափոխության, չխոսենք արդեն հողերի համայնական մշակությանն անցնելու մասին: Մեծ գյուղերն ունենում են սովորաբար և ընդարձակելու մեծ դաշտ, իսկ դա նշանակում ե, վոր կան և հեռավոր հողեր, վորոնց դժվար սպագործության ու վնասակար լինելու մասին մենք արգեն ասացինք:

Բոլորովին այլ բան ե, յեթե այդպիսի գրուղը բաժանվում ե գյուղակների՝ 50—120 ընտանիքով ամեն մեկում՝ հատկացնելով նրանցից յուրաքանչյուրին իրեն հասանելիք հողաբաժինները: Ամեն մի տեղահանության համար կարելի կլինի ընտրել այնպիսի ընտանիքներ, վորոնք ցանկանում են միասին տնտեսություն վարել և միատեսակ են հասկանում տնտեսության բարելավման ոգութը: Հողաբաժինը մեծ կլինի և ամբողջ հողը կկենտրոնանա նոր գյուղակի շուրջը: Մեծ չի լինի և համայնական ժողովը ու այնտեղ կարելի կլինի միմյանց շուտ հասկանալ ու համաձայնության գալ գյուղական բոլոր հարցերի մասին: Փորձը ցույց ե տվել, վոր մեծ գյուղերից շատերի տնտեսությունները միայն այն ժամանակ են հառաջագիմել, յերբ գյուղը բաժանվել ե ավելի մանր գյուղակների, վորից հետո իսկույն այդ մանր ու նոր գյուղերում առաջ են յեկել լայն հողաշերտեր, բազմացանություն, ընկերություններով տնտեսությունը վարելու ձևեր և այն:

Պետք ե հետեւ այդ գյուղերի որինակին ու կազմել առանձին գյուղակներ: Գյուղակները շատ մանր չպետք ե շինել, վորովհետև նրանք թույլ կլինեն և յերբ մտադըրվեն անցնելու ընկերություններով հողոգտագործության, ձեռնտու չի լինի մանր հողաբաժնում աշխատանքը մեքենաներով տանել և ուրիշ բարելավումներ մտցնել:

Դժվար կլինի և պետության համար այդպիսի փոքրիկ գյուղակներում դպրոցներ և հիվանդանոցներ հիմնել, ելեքտրականություն անցկացնել և այլ տեսակի ոգնություններ ցույց տալ: Գյուղակները չպիտի շինել այնտեղ, ուր հողի բնական դիրքը թույլ չի տալիս իսկական շեն կառուցել: Վորտեղ բնական պայմանները թույլ են տալիս, պետք ե միջին թվով ունենալ հիսունից մինչեւ 120 տուն ամեն նոր գյուղի համար:

9. Ինչու յե վճառակար հողի իրավունքի ու սահման-

Աերի անորոշությունը. Դա վասակար ե այն պատճառվ, վոր հողի ոգտագործման հաստատ չլինելու դեպքում, հողոգտագործողն զգուշանում ե յուր բոլոր ուժերն ու ջանքը գործի մեջ դնել: «Ինչու ջանք թափեմ, —ասում ե նա, —յեթե կարող ե պատահի, վոր վաղը հողն անցնի ուրիշն: Հաստատապես և վորոշակի ցույց տվեք ինձ, վոր հողի վրա իրավունք ունեմ, այն ժամանակ համարձակ կերպով կործադրեմ և աշխատանքս և միջոցներսա: Այսպես ե դատում գյուղացին, քանի դեռ գյուղատնտեսական արտադրությունը չի կազմակերպվել հասարակական ընդհանուր յեղանակով: Խորհրդային իշխանությունը հասկանում ե այդ և հոգ ե տանում գյուղացիական հողի ոգտագործման ամրացման և կայունության մասին: Բայց և այնպես գյուղում գոյություն ունեն շատ խառնաշփոթություններ հողային իրավունքների և սահմանների շուրջ: Համայնքի անդամներից շատերը դատ են սկսում հողի համար և չգիտեն վերջ ի վերջո, հողն ո՞ւմն ե հասնելու, և քանի գործը դատարանումն ե, վիճելի հողը մընում ե կամ անմշակ կամ շատ վատ ե մշակվում, վորից վասակում ե գյուղացու և պետության տնտեսությունը:

Շատ գյուղերում, հողը հանդիսատ մշակելու փոխարեն, դատ են վարում, յերեմն գործը դադանակի ու դանակի ե հասնում, գյուղացիության ուժերը, ժամանակին ու դրամը կորչում ե վեճերի ու կոիմարդի վրա:

Կան գյուղեր, վորոնք հեղափոխության սկզբից դատ են վարում հողի համար ու մինչև հիմա չեն պարզել հարցը: Գյուղը վիճում ե գյուղի հետ, իսկ գյուղի մեջ ընտանիքներ են զատվում իրարից: Պատահում ե, վոր նույն ընտանիքի անդամներն են դատվում հողաբաժնի համար: Գյուղացիների մեծ մասը լավ չգիտե որենքները, գործն սկսում են վոչ այնպես, ինչպես հարկավոր ե, ու սկսվում են անվերջ գանգատներ հողի մասին:

Պարզ ե, վոր հողի անբարեկարգությունը և նրանից առաջ յեկած հողային վեճերը պետք ե, վորքան կարելի յե, շուտ վերջացնել: Ամեն մի գյուղ և ամեն մի հողոգտագործող պետք ե ստուգի, թե ամեն ինչ հաստատ ու անվիճելի՝ յե իր հողային իրավունքների ու սահմանների մեջ, և յեթե վորեւ պակասություն յերևան գա, պետք ե աշխատի շուտով ուղղել թերությունները, իսկ դրա համար անհրաժեշտ ե կամ հողաշխարարություն առաջ բերի, կամ միայն իր հողերի համար փաստաթուղթ ստանագավառային գործադիր կոմիտեյից կամ գյուղխորհրդից: Յերբ վոր ձեռքին հողային փաստաթուղթ ունենա, վերջ կտրվի վեճերին ու գործն ել կարգի կընկնի: Բոլորն ել ու ամեն մեկն ել կիմանա, ինչքան հող ունի և ինչ սահմանների մեջ ե այդ հողը:

Մի խոսքով հողային գործը կձևակերպվի որենքների բոլոր հոդվածներով և կդրվի հաստատ հիմքերի վրա: Հողոգտագործողները կհանգստանան, նրանց աշխատանքի արդյունքը կրարձրանա և պարզ կերպով կողտվեն թե իրենք և թե պետությունը: Անա թե ինչ ե նշանակում հողի ոգտագործումը անվիճելի գրության հասցնելը:

10. Ինչու յե վեհասակար հողային անքարեկարգությունը զրոյի ներսում. Դա վասակար ե յերկու պատճառով, բայց յերկուսիցն ել վերջը նույն նետեանքն և ստացվում, այսինքն տնտեսությանը վեսս և քայլացում:

Առաջին պատճառն այն ե, վոր անբարեկարգությունը առաջ ե բերում դատեր, իսկ դատերը խանգարում են տնտեսություն վարելուն: Մենք հիմա արդեն այդ հաստատ գիտենք: Այդպիսի անբարեկարգությունն առաջանում է նրանից, վոր գյուղի ներսում հողի անարդար ու ապօրինի բաժանումից աների մի մասը ունենում է հողի ավելցուկ, իսկ մյանաբերի անտեսությունը վարելու բան



չի մնում: Յեթե հողաբաժանությունը արդարացի անեն,  
այդպիսի անկանոնություններ չեն լինի:

Յերկրորդ պատճառն այն է, վոր գեռես շատ գյու-  
ղեր պապենական տնտեսության ձեր պոչից են բռնել,  
մանավանդ վոր ամեն մի տուն դաշտի զանազան մա-  
սերում մանր հողակտորներ շատ ունի:

Դրա հետ միասին մեծ մասամբ վատ են դասավոր-  
ված նաև տնտեղերը: Գյուղն ապրում ե նեղվածքի մեջ,  
վատառողջ պայմաններում ու վատ շենքերում: Ծխերն  
ունեն փոքր ու անկանոն տնտեղեր ու բակեր, իսկ փո-  
ղոցները ծուռ ու մուռ են: Այստեղ աշխատանքի լայն  
ասպարեզ կա գյուղացիների համար: Նրանք դուրս պիտի  
գան այդ անտանելի պայմաններից և պետք ե բավարա-  
րեն իրենց կյանքն ու տնտեսությունը: Պետք ե անցնել  
բազմադաշտ սերմափոխության և լայն հողաշերտերի: Պետք  
ե հատակագծել գյուղերն ու տնտեղերը, վորպեսզի նրանք  
արձակ լինեն և կանոնավոր շինված: Պետք ե գիտենալ  
և պետության աջակցությամբ գործադրել շինարարություն  
ու ժողովրդական առողջապահությունը ապահովող կանոն-  
ները: Բարեկարգ գյուղում բնակչությունն ավելի առողջ  
ե և տնտեսությունն արդյունավետ:

Խորհրդային իշխանությունն իր բոլոր միջոցներով  
ոգնում ե գյուղերին՝ դուրս գալու ցիխից ու խավարից,  
վորի մեջ հարյուրափոր տարիներ գյուղացուն պահել և  
ցարական-կալվածատիրական իշխանությունը: Բայց գյու-  
ղացիությունն ինքը պետք ե արթնանա և գործի կպչի:  
Պետք ե վերջ տալ անբարեկարգություններին: Պետք ե  
աշխատել ապրել մարդագարի, իսկ տնտեսությունն այն-  
պես տանել, վոր նրանից ամենամեծ արդյունքն ստացվի:

Մինչև այժմ մենք քննեցինք, թե ինչ անբարեկար-  
գություններ կան գյուղում և ինչպիսի վասաներ են առաջ  
դալիս նրանցից: Բայց ինչ միջոցներով կարելի յե նրանց

վերջ տալ: Ինչի՞ց պետք ե սկսել, վոր գյուղի այդ ցավե-  
րը բուժվեն և վորպեսզի բարեկարգվի գյուղացու կյանքն  
ու տնտեսությունը: Յեթե մեր զբույցը շարունակենք,  
կտեսնենք, վոր այդ ամենի առաջն առնելու հիմնական  
միջոցը հողաշինարարությունն ե:

#### IV. Ի՞նչ ե ՀՈՂԱԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՅԵՎ ԻՆՉՈ՞Ի ՅԵ ՆԱ ԶԵՄՆՑՈՒԻ.

Պարզ ասած, հողաշինարարությունը կայանում ե հո-  
ղի ողտագործությունը կարգի բերելու մեջ: Նա զբաղ-  
վում ե հողային այն անբարեկարգությունների վերաց-  
մամբ, վորոնք խանգարում են տնտեսություննը կանոնա-  
վոր վարելուն: Թե հողային ինչ անբարեկարգություններ  
և անկանոնություններ կան, մենք հիմա արդեն գիտենք:  
Դիտենք և դրանցից առաջ յեկող վասաների մասին: Յեվ  
քանի վոր հողաշինարարությունը վերացնում է տնտեսու-  
թյան մեջ վասան ու անշահավետությունը, կնշանակե  
տնտեսության համար այն ողտակար ե և ձեռնուու:

Հողաշինարարությունը արդեն հազարավոր որինակ-  
ներով փորձված և ստուգված ե թե մեզ մոտ և թե ար-  
տասահմանում. այնտեղ վաղուց են հասկացել հողաշինա-  
րարության անտեսական ամբողջ ողտակարությունը, վորի  
պատճառով նրա համար չեն խնայում վոչ աշխատանք,  
վոչ ժամանակ, վոչ միջոցներ:

Հողաշինարարությունը շատ շուտ հանում ե իր վրա  
կատարած ծախսը: Յեփս առավել նա ողտակար պետք ե  
լինի մեր հանբարետության մեջ, ուր վոչնչացված ե կալ-  
վածատերերի իշխանությունը և վորտեղ հողի տերը  
հանդիսանում ե բանվորագյուղացիական պետությունը:  
Հողաշինարարությունից առաջ յեկած ամբողջ ողուար  
մնում ե գյուղացիներին, ուրեմն և աշխատավորական պե-  
տության:

Հողաշինարարության միջոցով լավ դրված տնտեսությունների մեջ կարճ ժամանակամիջոցում սկսում են ավելանալ ցանքսերը։ Առաջանում են ավելի ոգտավետ բույսեր։ Բարեկավում ե հողի մշակումն ու պարարտացումը։ Շատանում են անսասունների, մեքենաների ու գործիքների թիվը։ Բարեկարգվում են շենքերը, առաջանում են կոռալերատիվ ընկերություններ, կարգի յեն բերվում և մշակում են այն հողերը, վորոնք դեռ մոտիկ անցյալում անհարմար եյին համարվել ու դեն եյին ձգված։ Ավելանում ե բերքը։

Մի խոսքով, յերբ նայես ու համեմատես՝ ի՞նչ եր զյուղը հողաշինարարությունից առաջ և ի՞նչ ստացվեց նրանից հետո, միանդամայն պարզ կլինի, թե ի՞նչպիսի մեծ ոգուաներ են ստացվում կանոնափոր և բարեկարգված հողի վրա տարգող տնտեսության մեջ և ի՞նչպիս յետ են մնում անբարեկարգ տնտեսություններ։

Ի հարկե, միայն հողաշինարարությամբ սահմանափակվել չի կարելի։ Բարեկարգված հողի վրա կանոնափոր տնտեսություն պետք է վարել զյուղատնտեսի խորհուրդներով, զյուղատնտեսական գիտության ցուցմունքներով և առաջափոր տնտեսություններ վորոնողների որինակներով։ Բայց և առանց հողաշինարարության գործն առաջ չի գնալ։ Տնտեսությունը բարելավելու և բարձրացնելու մեջ—դա առաջին և անհրաժեշտ քայլն ե։ Փորձել բարեկարգվել տնտեսությունն առանց շինարարության, յերբ վորայդ անհրաժեշտ է, այդ միևնույն ե թե տունն սկսեն տանիքից շինել և վոչ թե հիմքից։ Ծիծաղելի, անմիտ և միաժամանակ վնասակար գործ կլինի այդ։

Մենք հաշվեցինք մեր զյուղի տասը զլիսափոր անբարեկարգությունները։ Այդ բոլորն ել հողաշինարարության ոգությամբ կարելի յե վերացնել։ Տասը պատվիրանի նըման կը կնքենք, վոր հիշելը հեշտ լինի։

1. Կովիր զյուղերի մեջ գոյություն ունեցող հողաշրվածության դեմ և մի տեղ հավաքիր քո հողերը։

2. Կովիր հողերի հեռավորության դեմ։ Մոտեցրու հողը հողոգտագործողին, կամ հողոգտագործողին մոտեցրու հողին։

3. Կովիր հողամասի անկանոն սահմանների դեմ։ ուղղիր և հավասարեցրու նրանց։

4. Կովիր պիտանի հողատեսքերի բացակայության կամ պակասության դեմ։

5. Կովիր ջրի պակասության դեմ և բարելավիր արևատեսության ջրի պարենափորումը։

6. Կովիր ձանապարհների բացակայության դեմ, կարգի բեր ձանապարհներն ու ամեն մի հողամասիդ մոտանալու հնարավորություն սահեցիր։

7. Կովիր անհրաժեշտ հողերի դեմ։ մի թույլ տուր, վոր նրանք շատանան, բարելավիր ու տնտեսությանդ մեջ առ նրանց։

8. Կովիր մեծ հանգի դեմ։ մեծ զյուղերը բաժանիր զյուղակների։

9. Կովիր հողային իրավունքների և սահմանների անորոշության դեմ, վերջ տուր ձգձգվող գատերին ու վեճերին և ձևակերպիր անվիճելի ողտագործությունդ հողի վրա։

10. Կովիր զյուղի ներսում բնակավայրի ու շենքերի անբարեկարգությունների դեմ։

V. Ի՞նչՊԵՍ ՊԵՏՐ Ե ՍԿՈՒԵԼ, ՀՈՂԱԶԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻ.

Ամենից առաջ պետք է քննել ու պարզել, թե չկա՞ արդյոք զյուղական հողերում վորեկ անկանոն բան, որին նաև հողացրվածություն, հողերի հեռավորություն և ուրիշ անհրաժեշտ բույններ։ Այս մասին պետք է մտածեն զյուղի առաջավոր տնտեսություն ունեցողները և ընդհանրապես նրանք, վորոնք հասկացել են արդեն, վոր հին ձևով

ապրել ու տնտեսություն վարել չի կարելի։ Գյուղում  
միշտ ել կգտնվեն հողի անկանոնությունները վերացնելու  
համար աշխատող գյուղացիներ, կուսակցական ընկերներ,  
կոմիերիտականներ, արձակուրդով գյուղը յեկած բանվոր-  
ներ, կարմիր բանակայիններ, պատերազմի ըեթացքում  
գերության մեջ գտնված գյուղացիներ և այլն։ Նրանց  
բոլորի համար ավելի պարզ ե հողի խառնաշփոթությու-  
նից առաջ յեկած մսասներն ու հողաշինարարության  
ոգուար, Գյուղացիությունը նրանց պետք ե լսի մեծ  
ուշադրությամբ։

Հողաշինարարության մասին առանձնապես պետք ե  
մտածեն աղքատ և միջակ տնտեսություն ունեցողները։  
Նրանց անտեսության մեջ ամեն ինչ չափած ձեւած ե։  
Այդ պատճառով նրանք պետք ե զգուշանան, վոր վոչ մի  
կոպել և աշխատանքի վոչ մի ժամ անտեղի չկորչեն։  
Իսկ ինչպես հայտնի յե, բարեկարգված հողի վերադիր  
ծախսերը անհամեմատ ավելի քիչ են և այստեղից առաջ  
յեկած բոլոր խնայողությունները կզործադրվեն տնտե-  
սության բարեկարգման վրա։ Ահա թե ինչու աղքատ ու  
միջակ տնտեսություն ունեցողները պետք ե միանան հո-  
ղաշինարարության համար ու իրենց վրա վերցնեն գործի  
նախաձեռնությունը։ Յեթե չքավոր ու միջակ տարրերն  
իրենք գործի գլուխը չանցնեն, հարուստներից ու մա-  
նավանդ հարուստ տնտեսություն ունեցող կուլակներից հո-  
ղաշինարարություն սպասել չի ել կարելի։

Շատ գյուղերում հարուստներին ու կուլակներին բը-  
նակ ձեռնառու չի հողաշինարարությունը։ Նրանցից մի  
քանիսը շատ ու լավ հողեր են զավթել և վախենում են,  
վոր հողաշինարարության ժամանակ հողի բոլոր ավելցու-  
կը իրենցից կկտրեն և ըստ կատեղորիայի կհավասարե-  
ցնեն։

Պատահել են շատ գեպքեր, յերբ կուլակները խան-

գարել են հողաշինարարությունը, խանգարել են համայ-  
նական ժողովները, խոռվություն են մտցրել գյուղի մեջ,  
զանազան սպառնալիքներ են արել համայնքին ու բամ-  
բասանքներով զբաղվել։ Այդպիսի գեպքերում նրանք ոգ-  
տվել են խնամիությամբ և ծանոթությամբ, ժլատ չեն  
յեղել հյուրասիրությունների մեջ, դիմել են և կաշառքի։  
Բայց այս բոլորը սարսափելի յե աղքատ ու միջակ գյու-  
ղացիների համար այն գեպքում, յերբ նրանք ջլատված  
և զատ-զատ են գործում։ Միայն միանալով՝ նրանք  
գործը կարող են իրենց ուզածի պես տանել։

Ովքեր հաստատապես անցել են գյուղի հողային բա-  
րեկարգման գործին, նախ և առաջ պետք ե գյուղական  
փոխադարձ ոգնության, խորհուրդների, գյուղխորհուրդ-  
ների ու շրջգործկոմների ոգնությամբ միացնեն ու իրենց  
շուրջը հավաքեն գյուղի չքավոր ու միջակ տնտեսություն  
ունեցողներին։ Նրանց թվում և պետք ե հաշվել այն  
ունկորներին, վորոնք իրենց տնտեսությունն իսկապես վոր  
սեփական աշխատանքով են վարում և վոչ թե կուլակու-  
թյամբ են պարապում։ Կուլակը նա յե, ով պարտք տա-  
լով կամ առեւտրով վաշխառույի նման ճնշում ու քայ-  
քայում և թույլ տնտեսությունները, ով ինչպես իսկա-  
կան աշխարհավեր սարդ, չնչին աշխատավարձով կամ հաց-  
փորի բանեցնելով՝ ստրկացնում է նրանց։ Զքալոր ու  
միջակ տնտեսությունները, զրանց թվումնակ ունեոր, բայց  
աշխատավորական տնտեսությունները, կուլակների հետ  
միևնույն ճամբան ունենալ չեն կարող։

Հողաշինարարությունը կարենոր գործ ե։ Նա կատար-  
վում ե վոչ թե մի որվա, այլ տարիների համար։ Այս-  
տեղ հարկավոր ե, —ինչպես ասում են, —յոթն անգամ չա-  
փել, մեկ կտրել։ Այդ պատճառով ել այդպիսի գործում մի-  
այն մեկի խելքը կարող ե քիչ լինել։ Հարկավոր ե խորհուրդ  
անել Խորհրդային իշխանության կողմից այդ գործին դրված

մարդկանց հետ, զրուցել զյուղատնտեսի և հողաշափ-հողաշի-նարարի հետ։ Նրանք և բարի խորհուրդ կտան, և կարգը կբացատրեն։ Հողաշինարարությունը հասարակական գործ է, այդ պատճառով ել պետք ե քննել զյուղական ընդհանուր ժողովում։ Խորհրդային որենքը, Հողային Որենսգիրքը ցույց է տալիս, վոր հասարակության ընդհանուր ժողովներին իրավունք ունեն մասնակցելու հողի իրավունք ունեցող և 18 տարին լրացրած բոլոր անդամները — տղամարդիկ և կանայք — անխտիր։ Իսկ յեթե համայնքի մեջ կան իրենց անտեսությունն անկախ վարող ավելի յերիտասարդ տան գլուխներ, նրանք նույնպես հաշվում են հասարակության իրավագոր անդամներ և կարող են նույնպես մասնակցել ժողովներին։

Վորպեսզի գործը չքանդվի, հարկավոր է, վոր հասարակական ժողովն որինական կազմ ունենա։ Որինակ՝ հողաբաժնանության մասին վճիռ կայացնելու համար հարկավոր է, վոր հասարակության ընդհանուր ժողովին ներկա լինին նրա բոլոր ծխերի վոչ պակաս քան կեսի տան-գլուխները կամ ներկայացուցիչները։

Հողաշինարարության այլ ինդիքներ վճռելու համար ևս պահանջվում է նույնը։ Իսկ յեթե հասարակությունը կմտադրվի նողի ոգտագործության ձեր վոխել, որինակ՝ համայնական ձեից անցնել ընկերականի, այն ժամանակ պահանջվում է, վորպեսզի ընդհանուր ժողովին ներկա լինին հասարակության բոլոր ծխերի յերկու-յերրորդականի ներկայացուցիչները և բոլոր իրավագոր անդամների կեսից ավելին։ Որինակ՝ յեթե հասարակությունն ունի 120 ծուխ և նրանցում կա 60 իրավագոր անդամ, այդ դեպքում ընդհանուր ժողովին պետք է ներկա լինին վոչ պակաս քան 80 ծխի ներկայացուցիչներ, և վոչ պակաս քան 180 իրավագոր անդամ։

Շատ ոգտակար է, յեթե համայնական ժողովներին

ներկա յեն լինում շրջանային գյուղատնտեսները և հողաշինարարները։ Այդ դեպքում նրանց հետ կարելի յե խորհրդակցել վոչ միայն գործի եյության մասին, այլ և ժողովի կազմի և հանաձ վճռի որինականության մասին։ Իսկ դրանից փողի և ժամանակի խնայողություն կստացվի, վորովհետև գործը միանգամից կանոնավոր կդրվի և հետագայում կարիք չի լինի փոփոխելու և ուղղելու։

Պետք է զգուշանալ ընդհանուր ժողովի վորոշման հետ համաձայն չեղող գյուղացիների գործելակերպից։ Նրանք յերբեմն հրաժարվում են ստորագրել համախոսականը, հեռանում են ժողովից ու այնուհետև գործին ել վոչ մի մասնակցություն չեն ցույց տալիս։ Այսպես անել սխալ ե։ Համաձայն չինելու դեպքում հարկավոր է վոչ թե գործը գցել բախտի կամքին, այլ ընդհակառակը, պետք ե մինչև վերջը մասնակցել, հայտարարել և ապացուցել անհամաձայնության պատճառները, պահանջել, վորպեսզի այդ արձանագրվի, ու ստորագրել, թե իսկապես ինչի հետ համաձայն չեն։ Այսպես չանելու դեպքում դրանից կարող են մյուսները ոգտվել ու գործը վճռել իրենց ցանկացած ձեռվ։ Հաճախ այդպես ել պատճառում ե։ Յերբ վորոշումն իրենց շահին հակառակ ե լինում, գործից յետ քաշված գյուղացիները հայտարարում են, վոր նրանք համաձայն չեն յեղել։ Նրանց հրաժարման հետքերը չեն լինում և հետո նրանց վոչ վոք չի հավատում։ Դրա համար ել հարկավոր է կանոն դարձնել հողաշինարարության գործում, ինչպես համաձայնության, նույնպես և անհամաձայնության դեպքում անպայման մասնակցել վճռին, բոլոր անհրաժեշտ հայտարարություններն անել ու ստորագրել։ Վերջապես հարկավոր է հողաշինարարության գործի համար հասարակության կողմից ընտրել բանիմաց ու բարեխիղճ լիազորներ, վորոնք գործը հասկանում են և վորոնց կարելի յե միանգամայն հավատալ, վոր իրենց

վատահողներին չեն դավաճանիք։ Գործի ընթացքում լիա-  
զորներին պետք ե հետեւ, նրանց արածներն ստուգել և  
հաշիվ պահանջել ընդհանուր ժողովի առաջ։ Հողային Ո-  
րենսգիրքն առանձին հողվածով պարտավորեցնում ե հասա-  
րակության լիազորներին ընդհանուր ժողովն է հասա-  
րակության հաշիվ տալ:

## VI. ՀՈՂԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶԵՎԵՐԻ ԸՆՐՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հողաշինարարության ժամանակ գլխավոր խնդիրն ե  
հողն այնպես կարգավորել, վոր նրա ոգտագործու-  
թյունը, վորքան կարելի յե, շահավետ լինի։ Տարբեր վայ-  
րերում և տարբեր համայնքներում հողն ոգտագործվել ե  
և հիմա յել ոգտագործվում ե տարբեր ձեռվ։

Ցերք հողը պապերի ժամանակից տարեց-տարի հին  
ձեռվ եր մշակվում, քիչ եյին մտածում՝ լա՞վ ե այդ, թե՞  
վատ։ Իսկ հիմա հողային-տնտեսական վերաշինության  
ժամանակ խուսափել այդ հարցից չես կարող։ Այժմ ամե-  
նից առաջ պետք ե վճռել՝ պահել հին ձեռվ, թե՞ անցնել  
նորին։ Անհրաժեշտ ե վորոշել, թե հողի ոգտագործության  
վո՞ր ձեն ե լավ, մանավանդ յերք ստիպված ես մտածել  
վոչ միայն այսորվա, այլ և ապագայի մասին, քանի վոր  
հողը վերաշինվում ե յերկար տարիների համար։

Հարցն անհաջող վճռելու դեպքում կարելի յե այն-  
պես խճճել տնտեսությունը, վոր նա այլևս առաջ չգնա։  
Իսկ հողի ոգտագործության լավ ձե ընտրելու դեպքում  
հողաշինարարությունն արգելք չի լինի տնտեսության  
բարելավմանը։ Ինչպես վարվել, պարզաբանե՞նք այդ.  
Նախ և առաջ պետք ե հասկանալ՝ հողի ոգտագործ-  
ման ի՞նչպիսի ձեռք են լինում և նրանցից ամեն մեկն  
ինչո՞վ ե լավ կամ վատ մյուսից։

Խորհրդային Հողային Որենքը բոնի կերպով գյուղա-

ցիներին չի ստիպում հողից այսպես կամ այնպես ոգտը-  
վել ու չի յել արգելում ընտրելու հողի ոգտագործման  
այս կամ այն ձեռվ։ Սակայն կյանքն ու գիտությունը  
ցույց են տալիս, վոր կան հողի ոգտագործման վատ և  
լավ, շահավետ և անշահավետ ձեռք։ Խորհրդային իշխա-  
նությունը նախագգուշացնում ե գյուղացիներին վատ և  
վոչ ձեռնտու ձեռքի ընտրությունից։ Իսկ լավ ու շահա-  
վետ ձեռքի ընտրությանն ամեն կերպ ոգնում և աջակ-  
ցում ե։

Քննենք այդ ձեռքը։

Հողի ոգտագործման ամենալավ և ամենաոգտակար ձեռ-  
— հողն ընկերովի մշակելն ե։ Այս դեպքում մի քանի տուն  
կամ ամբողջ գյուղը կամ նրա մի մասն իրենց հողը  
մշակում են միասին։ Ամեն մի տուն և տնտեսություն առ-  
անձին վերցրած շատ տեսակի կարիքներ ունի։ Մեկին  
բանվորական ուժ ե պակասում, մյուսին անասուն, յեր-  
բորդին անտեսության համար անհրաժեշտ վորեե բան։  
Միասին մշակելու դեպքում այդ պակասները լրացվում են  
և ընկերությունը միահամուռ ուժերով այնպիսի աշխատանք  
ե կատարում, վոր առանձին տնտեսությունները վոչ մի  
կերպ չեն կարող գլուխ բերել։

Ընկերության մեջ հեշտ ե դիմանալ տնտեսական ա-  
մեն տեսակի ձախորդությունների։ Առանձին տնտեսու-  
թյունը վորեե դժբախտության դեպքում կարող ե այն-  
պես վասակել, վոր այլևս չի կարող վոտքի կանգնել. բայց  
ընկերության մեջ աշխատելիս՝ ուրիշները նրան կոգնեն  
ու նրա համար դժբախտությունը շատ ել զգալի չի լինի։

Ընկերությամբ հեշտ ե գյուղատնտես և հողաշափ  
ունենալ, հեշտ ե մեքենա գնել, վոխտվությամբ սերմա-  
ցու ստանալ, ցեղն ազնվացնելու և զարգացնելու համար  
վորոշ արտոնություններով անասուն ձեռք բերել և այն։

Ընկերությանն ավելի յեն հավատ ընծայում, քան բա-

ժան տնտեսության տիրոջ: Ընկերության մասին ավելի շատ են հոգ տանում: Արժան ե նստում և առաջին հերթին ե կատարվում ընկերության համար նաև հողաշխնարարությունը: Հողի ընկերովի ոգտագործման դեպքում միանգամից վերանում ե հողացըրվածությունը, անհետանում են և միջնակներն իրենց անպետք խոտերով, ու հողը մշակում ե ամբողջությամբ, առանց վորեե կորստի: Առանձին ընտանիքի փոքրիկ ու նեղ շերտերով հողաբաժնում չի կարելի մեքենաներով աշխատել, դա և անհարմար է, և վոչ ձեռնուու: Իսկ յեթե մի քանի ընտանիքների հողաբաժնները միացնենք մի տեղ, կստացվի հողի բավականին լավ կտոր, վորի վրա ձեռնուու յե և հսարավոր՝ մեքենաներով և հողը մշակել, և ցանքսն անել, և բերքը հավաքել:

Ընկերության գործերը կառավարելու համար կարելի յե այնպիսի մարդիկ ընտրել, վորոնք միակերպ հասկանում են տնտեսության բարելավման անհրաժեշտությունը և համաձայն են համերաշխ ու միասին աշխատել:

Գյուղացիական տնտեսության մեջ կան կարեոր գործեր, վորոնց մենակ վոչ մի կերպ չի կարելի գլուխ բերել և վորոնք անպայմանորեն պահանջում են ընկերովի արտելային աշխատանք: Որինակ՝ ճահիճները չորացնելը, գետափերն ամրացնելը, հեղեղների դեմ կովելը, ջրանցքներ և ճանապարհներ շինելը և այլն և այլն: Ընկերությունն այս ամենը շատ շուտ գլուխ կբերի, իսկ առանձնացած տները՝ վոչ:

Ընկերությամբ ավելի ձեռնուու պայմաններով կարելի յե գնել այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ ե տնտեսության համար: Միաժամանակ ձեռնուու պայմաններով ել կարելի յե վաճառել ընկերության մթերքները: Մի խոսքով՝ այս հարցին վոր կողմից ել մոտենալու լինենք, ամեն ինչ

ընկերության ոգտին ե խոսում: Հարկավոր ե միայն շնորհքով կազմակերպել ընկերությունը:

Գյուղացիք արդեն հասկանում են, վոր կոռպերացիան մեծ գործ ե, հարկավոր ե նրան անպայման մոտեցնել հողին, ուր նա պակաս ոգտակար չե, քան այլ տղնտեսական գործերում: Պետք ե հասկանալ, վոր մանր, մի տեղ չհամախմբված գյուղացիական տնտեսությունների վրա իդուր փչանում ու կորչում ե մեծ քանակությամբ ույժ, ժամանակ ու միջոցներ, վորոնց կարելի յեր գործադրել տնտեսության բարելավման համար: Պետք ե լավ հիշել գյուղացիությանը կալվածատիրական իշխանությունից աղատող ու նրան մեծ բարեկամ Վշաղիմիր Իշխանինի խոսքերը, վորը շատ անգամ ե սովորեցրել մեզ, թե մանր առանձին տնտեսությունները գյուղացու կարիքներին յեն կարող վերց տալ. պետք ե ամեն տեղ, ուր անգամ ամենափոքը հնարավորություն կա, ընկերություններ հիմնել՝ հողն ընկերովի—հասարակական ձևով մշակելու համար:

Հողաշինարարության անցնելով՝ գյուղացիները պետք ե առաջին հերթին քննեն՝ հողը միասին մշակելու ընկերություններ կազմելու հարցը:

Հողային Որենսգիրքն ամեն կերպ հեշտացնում ե նման ընկերություններ հիմնելը: Հողային ընկերության անդամների մեծամասնության վորոշմամբ հողի ընկերական մշակությունը կարելի յե մացնել ինչպես ամբողջ հողաբաժնի, նույնպես և նրա մասերի վրա: Յեթե համայնքի մեջ հողի ընկերովի մշակության անցնել ցանկացողները փոքրամասնություն կազմեն, նույնիսկ մեծամասնության անհամայնառության գեպքում, համայնքը պարտավոր ե նրանց համար հարմար մի տեղում հողամաս հատկացնել:

Բացի դրանից, յեթե հողի ընկերովի մշակության

համար համայնքից բաժանվում են չքավոր տնտեսություններ, այն ժամանակ նրանց համար հատկացվում ե ավելի հարմար և գյուղին մոտ ընկած, ավելի հեշտ մշակելի և ջրով ու ճանապարհներով ավելի լավ ապահովված պիտանի հողամասեր:

Ընկերության ոգտագործության տակ գտնվող հողը մնում է ոգտագործողի ձեռքում, յեթե մինչև անգամ ավելի՝ յե հողաբաժնության նորմաներից:

Վերջապես առաջին հերթին ընկերություններին ե ոգնություն հանցվում սերմերի, ազնիվ տեսակի անսունների և այլ տեսակի փոխատվության ժամանակ, ինչպես և նրանց համար զեղջ ե արվում միասնական գյուղատնտեսական հարկից:

Հողի ընկերությամբ ոգտագործելու ոգումներն այնքան շատ ու մեծ են, վոր վաղ թե ուշ գյուղացիներն անցնելու յեն նրան: Յեթե հիմա ինչ—ինչ պատճառներով դժվար ե ընկերություն հիմնելը, պետք ե ընտրել հողի ոգտագործության այնպիսի ձևեր, վորոնցից հետագայում ավելի հեշտ կինի ընկերովի հողագործության անցնելը:

Այս խնդրում գյուղացիք հաճախ սխալվում են: Այս որվանից դեմք վաղվա որը չեն տեսնում: Մինչդեռ հողաշինարարությանն ու տնտեսությանը հարկավոր ե համակերպել վոչ միայն ներկան, այլ և ապագան տեսնելով: Զըպետք ե աչքաթող անել, վոր խորհրդային իշխանությունն աստիճանաբար գյուղ ե մտցնում գործիքներ, տրակտորներ և ցանող, հնձող ու սերմ զտող մեքենաներ: Կամաց-կամաց գյուղին կտրվի յելեկտրաքան ուժ ու նրանով շարժող մեքենաներ:

Գյուղացիներին ձեռնտու կինի մեծ քանակությամբ լավ հատկության մեքենաներ արտադրել վաճառելու համար ու նրանց մի մասն ել իրենք կվերամշակեն: Գյու-

դացիության մեջ կտարածվեն գյուղատնտեսական այնպիսի գիտելիքներ, վորոնք ցույց կտան, թե ինչպես պետք ե տնտեսությունը վարել: Անա այդ ժամանակ ել կպարզվի, վոր մանր, անջատ գյուղացիական տնտեսությունները վոչ մի կերպ չեն կարողանալու մրցման դիմանալ մեծ կոռպերատիվ կամ պետական տնտեսությունների հետ, վորոնք գործի կդնեն մեքենաներ և վորոնց մթերքները կլինեն ավելի արժան և ավելի լավ: Այդ գեպքում մանր տնտեսություններին մնում է կամ վոչնչանալ կամ միանալ ու կազմել մեծ տնտեսություններ: Ուրեմն ավելի լավ ե հենց այժմվանից հողի ոգտագործումը կանոնավորել այնպես, վոր հետագայում կարելի լինի մանր տնտեսություններից կազմել մեծը, առանց նրանց քայլայլու ու ավելելու:

Հաճախ գյուղացին մտածում ե ալսպես. «կիենտրոնացնեմ իմ հողը մի տեղ. կտեղափոխվեմ հողի վրա, ագարակ կիմմեմ», կառանձնանամ բոլորից ու հանգիստ կլինեմ: Վոչ վոք ինձ չի խանգարի և ինքս իմ տերը կլինեմ»: Բայց պարզվում ե, վոր մինչև իսկ միջակ տնտեսության համար առանձնացած՝ դժվար ե վոտքի կանգնել, իսկ թույլ տնտեսության համար՝ ավելի ևս: Նրանց հողաբաժինները փոքր են, իսկ ագարակ հիմնելու ծախքերը՝ մեծ: Պետք ե հին տեղից տեղափոխվել ու նորից կառուցել տնտեսության համար անհրաժեշտ բոլոր շենքերը: Պետք ե ջինոր փոքրել, ցանկապատ քաշել, նոր հողը բարելավել, ճանապարհներ անցկացնել:

Միմյանցից հեռու, առանձնացած ագարակներում ապրելով՝ ավելի դժվար ե միմյանց ոգնել, քան այն գեպքում, յերբ ապրում են միատեղ՝ գյուղակում կամ գյուղում: Հեռու յեն լինում և հիվանդանոցից, և դպրոցից: Հետո՝ չե՞ վոր տարբեր ագարակներում տարբեր սերմափոխություններ են կիրառվում: Դրանից դաշտը

փոքր ե ստացվում ու նրա վրա դժվար է հողի մշակումը, ցանքսը ու բերքի հավաքումը մեքենաներով կատարել: Իսկ յեթե գործի ընթացքը պահանջի ագարակատերերին միանալ մի ընդհանուր տնտեսության մեջ, դրա համար հարկավոր կլինի փոխել սերմացանի կարգը:

Յերբ գյուղն ելեկտրոֆիկացիայի յենթարկվի, ավելի հեշտ ու արժան կլինի ելեկտրական ուժն ընդհանուր գյուղին տալ, քան ցիր ու ցան ընկած ագարակներին: Գյուղակներում ավելի հեշտ ու ավելի ձեռնտու յեև ընդհանուր շարժիչ մեքենաներ, ընդհանուր կայաններ ու պահեստներ ունենալ, քան առանձին ագարակներում: Կոռպերացիայի և պետական առևտուի համար նույնալիս ավելի հարմար ե գործ ունենալ մի բնակավայրում գտնըվող անտեսությունների հետ, փորոնց, մեր վատ ճանապահների շնովիվ, շուտ ել չես հասնի: Միատեղ, մի գյուղում ապրելու դեպքում, բնակիչները մեշտ ել հարմարություն կունենան հավաքվելու, միասին քննելու իրենց ընդհանուր գործերը, միասին ել մտածելու տնտեսության մեջ բարելավումներ մտցնելու մասին: Ագարակների բնակիչներն ընդհանուր գործեր քիչ ունեն, նրանց համար հավաքվելն անհարմար ե ու նրանք ընտելանում են ապրել ու աշխատել առանձնացած: Մենակե՛քիչ բան կշինես, և տընտեսության մեջ քիչ նորություններ կմտցնես:

Ուժը միության մեջ ե միայն:

Այս պատճառով ել իրավացի չեն այն գյուղացիները, վորոնք մտածում են ընդմիշտ ագարակներում հիմնվելու ու պահելու իրենց տնտեսությունները: Ներկայի համար դա գուցե հանգիստ ու ոգտավետ թվա, բայց հետազայում այդ ոգտուտները կվերանան և տնտեսությունն ստիպված կլինի անպայման վերաշնվելու: Ինչպես արդեն ասված ե, խորհրդային հողային որենքը և իշխանությունն ամեն դեպքում չեն արգելում ուժեղ ագարակներ հիմնելը:

Բայց յեթե նրանք ապագայում տնտեսության համար ոգտակար չեն, ապա և նրանց աջակցություն ցույց տալը ձեռնտու չե, այդ պատճառով ել ագարակներ շինելու աշխատանքները կատարվում են վերջին հերթին առանց պետության կողմից ընկերություններին, համայնքներին տրվելիք աջակցության, արտոնությունների ու փոխառվության:

Ագարակներ արժե հիմնել միայն այնտեղ, ուր հողն իր բնական հատկությամբ ու դիրքով անհարմար ե լավ գյուղակներ կամ շեներ հիմնելու համար:

Մենք արդեն բացատրեցինք, վոր տնտեսության և հողի ոգտագործությանը ամենից ոգտակար ձեռ ընկերականն ե, իսկ ամենից անհարմարը, մանավանդ ապագայի համար, դա ագարակայինն ե: Ապա հողի ոգտագործման վո՞ր ձեն ե միջին տեղը բռնում: Հողի ոգտագործման վո՞ր ձեից ավելի հեշտ ե հետազայում ընկերական—հասարակական տնտեսության անցնելը: Դա յերեսուն—քառասուն տնից կազմված շեներով կամ գյուղակներով, լայն շերտերի վրա, բազմադաշտային սերմնափոխությամբ, հողի ոգտագործումն ե: Դրան ե, վոր պետք ե ձգտեն գյուղացիք հողաշնարարության ժամանակ:

Յեթե գյուղը մեծ չե և նրան տեղահան անելու կարեք չքա; հարկավոր ե հողաշնարարության ոգնությամբ գյուղի բոլոր հողերը հավաքել նրան մոտ ու նրա շուրջը և մի լավ կլորացնել ու հավասարեցնել նրանց սահմանները: Հետո վարելահողը պետք ե բաժանել սերմափոխության դաշտերի, իսկ դաշտերը բաժանել լայն հարմար շերտերի, վորպեսզի ամեն մի դաշտում ամեն տուն մեկյերկու, մշակելու համար լայն ու հարմար, շերտեր ունենա:

Այն վայրերում, ուր հողի համայնական ոգտագործումը սովորական չի, այլ հնուց գոյություն ունի հողի

ոգտագործման առանձնական ձևը, առանց հողերի վերաբաժնության, այստեղ պետք ենույնպես վոչնչացնել հողացրվածությունը և ստեղծել ամբողջական պատվածներ:

Հարվածային հողաբաժանության դեպքում սակավահող ու հողագուրկ, չքափոր ու միջակ ծխերը պետք ե արթուն լինեն, վորպեսզի հողը կտրելիս ամեն մի ընտանիքի տրամադրվի վոչ այնքան, վորքան նա հող ունի ներկայիս, այլ վորքան համառում ե նրան ըստ յուր ծխի շնչերի թվի կամ ըստ տեղում ընդունված բաշխման միավորի (ծուխ, աշխատավոր ձեռք և այլն):

Այժմ արդեն պարզ ե, թե ինչպիսի՝ հարմարություն ե ստացվում գյուղում լայն շերտերով և բազմադաշտ սերմափոխությամբ հողն ոգտագործելուց: Յերբ ապագայում ընդհանուր տնտեսություն հիմնելու կարիք լինի, հողին վերաբերող բոլոր անհրաժեշտ բաներն արդեն գոյություն կունեան: Կա ընդհանուր բնակավայր, վորտեղ հարմար ե ամեն տեսակի տեխնիքական հարմարություններ ստեղծել հողը մեքենաներով մշակելուն անցնելու համար: Գյուղը տարածությամբ բավականին մեծ ընդհանուր հողաբաժին ունի, վորը կարելի յե ամբողջովին մեքենաներով մշակել: Ամեն մի տնտեսություն իր սերմափոխությունը հիմնովին շրջելու կարիք չի ունենա, վորովհետև բոլորի սերմափոխման հերթականությունն ընդհանուր եր: Հարկավոր չի միայն շատ փոքրիկ գյուղակներ հիմնել, վորովհետև ընդհանուր տնտեսության անցնելու դեպքում նրանք թույլ կլինեն և ավելի մեծ գյուղերը տընտեսության շահավետության տեսակետից նրանց կճնշեն:

## VII. ԽՆ2ՊԵՍ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀՈՂԱՁԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հողային Բաժինը գյուղացիներից հայտարարություն ստանալով, վորովշած ժամանակին տեղն ե ուղարկում հողաչափ-հողաշինարար՝ գործը նախապատճենում է հողաշինարարությունը վերջացնելու համար: Այստեղ արդեն նա ճշտությամբ հաշվում է հողը և ցույց ե տալիս սահմանները: Այդ դեպքում կարիք չկա հուզվելու, վոր բոլոր հողերը վորակի ու բերքի տեսակետից հավասար չեն իրար: Հողի արժեքավորումը կատարում է հողաչափը համայնքի լիազորների մասնակցությամբ: Յեթե գյուղի հողաբաժինը մեծ ե և տարբեր

մար: Հողաչափը գալով գյուղը, մեկ անգամ ևս պարզում ե, թե իսկապես ինչպիսի՝ հողաշինարարություն են ցանկանում գյուղացիները: Դրա հետ միասին նա պարզում ե՝ ի՞նչ հողեր պետք ե կարգավորել, ով և ինչպիսի հողային իրավունքներ ունեն և վորքա՞ն հող պետք ե ստանան: Գործը նախապատճենուց հետո հողաչափը բացատրում ե ժողովին, թե ինչպես ավելի լավ կլինի կատարել հողաշինարարությունը: Բոլոր նրանք, ովքեր ոգտվում են հողից, պետք ե մասնակցեն գործի քննությանը, իրենց հայտարարություններն անեն և հողաչափից բացատրություններ խնդրեն, մինչև վոր պարզ չհասկանան, թե ինչպես կլինի հողաշինարարությունից հետո, ի՞նչպես կընկնեն սահմանները և վո՞րտեղ, վո՞րքան, ո՞ւմ և ի՞նչպիսի հող կհասնի:

Լավ հողաշինարար ունենալու, ինչպես նաև հողից ոգտվողների գործին գիտակից մասնակցություն ցույց տալու դեպքում, շատ հաճախ ամբողջ գործը վերջանում է հաջող: Վերջանում են բոլոր վեճերն և ամեն մեկն ստանում ե այն, ինչ ըստ որենքի հասնում ե իրեն: Հողաչափը պետք ե առանձնապես հետևի, վորպեսզի որենքին հակառակ և անարդար բան չկատարվի և վորպեսզի աղքատ և միջակ տնտեսությունները, հարուստ տնտեսությունների հետ համեմատած հողի կողմից զրկված չլինեն:

Յերբ վոր գործի նախապատճաստական մասը հաստատվում ե, այն ժամանակ հողաչափ-հողաշինարարը նորից վերադառնում է հողաշինարարությունը վերջացնելու համար: Այստեղ արդեն նա ճշտությամբ հաշվում է հողը և ցույց ե տալիս սահմանները: Այդ դեպքում կարիք չկա հուզվելու, վոր բոլոր հողերը վորակի ու բերքի տեսակետից հավասար չեն իրար: Հողի արժեքավորումը կատարում է հողաչափը համայնքի լիազորների մասնակցությամբ: Յեթե գյուղի հողաբաժինը մեծ ե և տարբեր

հատկության հողեր շատ կան ու նրանց կատեզորիաները վորոշելիս վեճեր են առաջ գալիս, այն ժամանակ գործի յե հրավիրվում գյուղատնտես, վորը և ոգնում ե հողը ճշտությամբ կարգերի բաժանել: Յեթե ծխի հողաբաժինը վորակով վատ հող ե լինում, այն ժամանակ այդպիսի հողից տալիս են համեմատաբար ավել շատ, վորպեսզի վերջի վերջո նրանից կարելի լինի ստանալ նույնչափ բերք և նման հող ստացողը չվասպի:

Հողաշխարարության ժամանակ հարկավոր ե հետևել ու ստուգել, վոր այն կատարվելուց հետո հողի ոգտագործման մեջ բոլորն ել հարմարություններ ունենան: Հարկավոր ե այնպես անել, վոր չմնան իրարից ցրված և բաժան-բաժան ընկած հողի շերտեր, հեռու ընկած հողեր, վատ սահմաններ, վոր վերջ տրվի ճանապարհների բացակայության, ջրի վատ մատակարարման և ուրիշ պակասությունների: Չի կարելի թույլ տալ, վոր հողաշխարարության հետևանքով վոմանց դրությունն ավելի լավ լինի, քան առաջ եր, իսկ մյուսներինը վատ մնա, կամ ավելի վատանա: Պետք ե փոխադարձ հարմարություններ պահպանել և ստեղծել հողի ոգտագործման ընդհանուր բարելավում:

Հողաչափը պարտավոր ե կրկին ցույց տալ ու բացարել հողոգտագործողներին իր կազմած նախագիծը ու գծած սահմանները, իսկ նրանք պետք ե մեկ անգամ ևս վերջնականապես պատկերացնեն գործը և հայտնեն հողաչափին, թե հարկավոր չե արդյոք հողաշխարարության մեջ գորևե փոփոխություն կամ բարելավում մտցնել: Հարկավոր ե մանավանդ հաստատ կերպով վորոշել ու հայտարարել, թե յե՛րբ և ի՞նչ կարգով պիտի անցնել հողի ոգտագործմանը նոր սահմաններում: Այդ գեպքում հարկավոր ե գիտենալ, վոր այդ անցնելը կարող ե լինել մի մի այս գործը վերջնականապես պատկերացներին գործը չձգձգելու համար, կթողնվեն առանց հետևանքի:

տատել տալուց հետո և վոչ յերբեք ավելի շուտ ինքնագլուխ և ժամանակից առաջ անցնելու համար՝ իբրև կամայական քայլի՝ պատիժ ե սահմանված:

Գյուղացիները յերբեմն զանց են առնում այդ, վորի հետևանքով յեթե գործի վերջնական հաստատման ժամանակ հատկածված հողաբաժինները փոփոխվեն, այդ գեպքում ստիպված են լինում նորից խախտելու տնտեսությունը: Ավելի լավ ե սպասել, մինչև գործը վերջնականապես հաստատվի ու այն ժամանակ արգեն բոլորվին հանգիստ ու վստահորեն անցնել հողի նոր ոգտագործմանը:

Իրենց բոլոր հայտարարությունները, վեճերն ու անբավականությունները հողաշխարարության մասին գյուղացիները պետք ե հայտնեն հողաչափին՝ իրանց նախագիծն ու սահմանները ներկայացնելուց վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ընթացքում: Յեթե այդ ժամանակամիջոցը, վոչ հարգելի պատճառներով, բաց ե թողնվում, այն ժամանակ գավառի հողային բաժինը գործի մասին ել վոչ մի դիմում չի ընդունում:

Գավրամնի վորոշումից անբավական մնացողները կարող են յերկու շաբաթվա ընթացքում բողոքել Հողգողկոմատին, վորը և կասի իր վճռական խոսքը: Սակայն գանգատվել և գործը յերկարացնել արժե այն գեպքում միայն, յերբ գործի մեջ թույլ ե տրված վորեւե ապորիանություն: Հասարակ բաների համար չարժե ժամանակ ու դրամ վատնել: Անմիտ ու դատարկ բողոքները, վորոնք արվում են հենց այնպես միայն, գործը չձգձգելու համար, կթողնվեն առանց հետևանքի:

Գործը վերջնականապես հաստատելուց հետո, հողաշխարարության ժամանակ վորոշած հողային սահմանները հաստատվում են ընդունված սահմանային նշաններով: Միաժամանակ սահմանների պտույտներում դրվում

են սահմանային սյուներ՝ խորհրդային մուրք ու մանգաղ նշանով։ Դաշտային վայրերում սահմանները ակոսվում են գութանով։ Վերջապես, կարգավորված հողի համար, համայնքին հողային Վարչությունից փաստաթուղթ ե տըր-վում, վորը կոչվում ե հողային վավերագիր (զեմելինայ զաпис)։ Նրա մեջ արձանագրված ե տեղի հատակագիծը ու ցույց տված նրա սահմանները ու հողի ընդհանուր քանակը իր առանձին տեսակներով։ Նույն փաստաթղթում գրի յեն առնվում և հողից ոգտվողների բոլոր իրավունքները։ Հողային վավերագիրը տալու ժամանակ այդ վավերագիրը հատուկ համարով նշանակվում է հողային տոմարագրության գործում։

Դրանով վերջանում ե հողաշինարարությունը: Բայց  
հողաշինարարության գործը վերջացնելով, գյուղացիք  
չպետք ե հանդատանան: Հողաշինարարությունը փոքր նշա-  
նակություն կունենա, յեթե հողը միայն նոր ձևով կար-  
գավորվի, իսկ նրա վրա տնտեսությունը հին ձևով տարվի,  
հողը վատ մշակվի, առանց անհրաժեշտ պարարտաց-  
ման մնա և վատ սերմեր ցանքեն: Բարեկարգված հողի  
վրա պետք ե անմիջապես բարելավ տնտեսության անց-  
նել՝ գյուղատնտեսների խորհրդով ու նրանց ղեկավա-  
րությամբ իրականացնելով այն ամենը, ինչ վոր ճանաչ-  
ված ե գիտության կողմից և ստուգված ե կյանքում:  
Միայն այն ժամանակ—բարեկարգված հողի վրա տնտե-  
սությունը կլինի կանոնավոր և արդյունավետ: Այն ամե-  
նից հետո, ինչ վոր բացատրվեց հողաշինարարության  
մասին, մենք տեսնում ենք, վոր խորհրդային հողաշի-  
նարարությունը կատարվում ե առանց վորեւ բռնության:  
Այդ կատարվում ե վոչ թե թաքուն, գաղտագողի, այլ  
իրենց, աշխատավոր հողագործների լայն մասնակցությամբ՝  
նրանց աչքի առջև և հենց նրանց հետ միասին: Ցեղ վոր-  
քան նրանք իրենք գիտակցարար կմերաբերվեն գործին

և խորը կթափանցեն, այնքան գործն ավելի լավ կընթառա և այնքան ավելի մեծ ոգուտներ կստացվի:

Իսկ Խորհրդային Խշանությունն այդ դեպքում կանգնած է աղքատ ու միջակ տնտեսությունների կողմը, նրանց պաշտպանում է կուլակների ճնշումից ու ամեն կերպ ոգնում է, վոր հողը լավագույն կերպով ոգտագործվի: Այդ ոգտագործությունը լավ է այնքան, վորքան ավելի մոտ է հողի ընկերութիւն ոգտագործման ձևին ու վորքան հեռու յե մանր, միայն իր ուժով աշխատող տրնտեսությունից, վորը մեկուսացած է իր վանդակում: Ապագայում հաղթանակը այնուամենայնիվ նման տնտեսություններին չի լինելու: Հեռատես, կշռադատող հողոգտագործողը, հողաշխարարության անցնելիս, պետք է այդ լավ հասկանա և յերբեք չմոռանա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- |    |  |    |
|----|--|----|
| 1. | Գյուղացիների պետք է հոգ տանեան իրեաց հողե-<br>րի կարգավորման մասին . . . . .               | 3  |
| 2. | Վարչութեան և հողային անքարեկարգությունը . . . . .  | 4  |
| 3. | Ինցու հողային անքարեկարգությունը ձեռնեսու յև<br>գյուղացիական ժամանակակիցան համար . . . . . | 7  |
| 4. | Ի՞նչ է հողաշինարարությունը յեվ ինցու և նա<br>ձեռնեսու . . . . .                            | 19 |
| 5. | Ի՞նչպես պետք է սկսել հողաշինարարությունը . . . . .   | 21 |
| 6. | Հողի ոգտագործման ձեմքերի ընտրության մասին . . . . .  | 26 |
| 7. | Ի՞նչպես է կատարվում հողաշինարարությունը . . . . .  | 34 |

Խ. Ա. Հ. Մ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Հ. Ա. Ց Կ Ա. Կ Ա. Ն Ս Ե Կ Յ Ի Ո.

Մ Պ Ս Կ Վ Ա

Ն Ի Կ Ո Յ Լ Ս Կ Ի Փ Ո Ղ ., 10.

ի. ՍՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց. գինը 50 կ.: ի. ՍՏԱԼԻՆ—Ազգային հարց.  
(տպագրված է): Վ. Լենին—Պատգամներ յերթառարդության. գինը 15 կ.:  
ի. ՑԵՂԲՈՒԾԿԻՅՑ—Մեր առաջին բանվրա-գյուղացիական նեղափախությունը. գինը 70 կոպ.: ն. ԿՐՈՒՊՈՒԿՈՅՑ—Լենինի պատգամները ժողովրդական  
լուսավորության մասին. գինը 20 կ.: ԼԵՎՏԵՆՅԵՅՑ—Ինչպես աշխատացնել  
խորհուրդները. գինը 30 կ.: Զ. ՅԱՎՈՐՍԿՈՅՑ—Կարա Յետկին (Կենսագոր).  
գինը 10 կ.: Ե. ՏՅՈՒՐՅԱԿՈՒՅՈՎ—Ազգային հարցը և դպրոցը. գինը 40 կ.:  
Բ. ԺԱՎՈՐՈՒՆԿՈՎ—Հասարակագիտությունը և աստիճան. դպրոցում, գ. 65 կ.:  
Ն. ՑԵՂՑԱՌՈՎ—Ինչ վարչական կուռ. XIV համագումարը. 112 հջ., գինը 30 կ.:  
Ա. ԴՄԻԵՐՅԵՎԱՄ—Տգիտությունը և սնահակատությունը. գինը 15 կոպեկ.


Մ. ԼԻՎԵՆՍԿԻ—Գյուղատնտեսական հարկ. գինը 20 կ.: ՅԵՍԼԵՊՈՎ—Գյուղա-  
ցիական պահանջները և խորհրդային գործոցի ծրագրները. գինը 12 կոպ.  
Պ. ՎԼԱՍՈՎ—Հողի մշակումը յերաշտի ժամանակ. գինը 40 կոպ.: Լ. ՅՈԶԵ-  
ՖՈՎԻՉ—Գյուղի կանոնի գերան կատարել (կոռպակացիան գյուղում). գինը 30 կ.:  
Ի. ՊՈԴՅԱԳՈՂՅԵՎԻ—Աստծու կամքը, թե գյուղատնտեսական գիտությունը.  
գինը 20 կոպ.: Ա. ԿՐԱՎԶԵՆԿՈՎ—Թե բնչպես կարելի յե գյուղում ելեքտրա-  
կանություն անցկացնել. գինը 15 կոպ.: Պ. ԼիլիԱԶՈՎ—Խոզը գյուղացիների  
կերակրողն ե. գինը 18 կոպ.: Ն. ԲՐԱՍՈՒԻՆԵ—Թե բնչպես գերմանացին ստի-  
պեց, վոր կովը տարիը յերկու անգամ ծնի: գինը 15 կ.: Ա. ՍԿՈՄՈՐՈԽԵՎ—  
Ինչպես ընտրել կաթնառան կով. գինը 12 կոպ.: Ա. ՍԿՈՄՈՐՈԽԵՎ—Առա-  
ջն ոգնություն հիվանդ կենդանուն. գինը 17 կոպեկ: Ա. ԲՐԱՆՆԵԲՈՒՐԳ—  
Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները. գինը 17 կոպեկ: Ն.  
ՍԵՄԵՆՉԿՈՎ—Թոքախտ (պատկերազարդ): գինը 25 կոպ.: Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ—  
Ցերեխաների վարակիչ հիվանդությունները. գինը 30 կոպ.: Վ. ԲՐՈՆԵ-  
Վեներական ախտեր. գինը 25 կոպ.: Ա. ՍՊԵՐԱՆԾԿԻ—Մոր այբբենարանը—  
(պատկերազարդ). գինը 16 կոպ.:

Ն. ՍԵՄԵԿԻՆ—Ժրեզ, նրա վորդիները և թոռները. Վ. ՅԱԶՎԻՑԿԻՅՑ—Մարդ-  
կային բնակարանի պատմությունը. գինը 15 կոպ.: Պ. ԿՐԱՎԵ—Ինչպես և  
արքված տիեզերքը. (պատկերազարդ): ԿՐԱՅՅԱՑԿԻՅՑ—Վորոտ, կայծակ և  
ելեքտրականություն (պատկերազարդ): Ա.ԳՈԼ—Մարդու և կենդանիների  
ծագումը (պատկերազարդ):

Մ. ՔՈՐԿԻՅՑ—Յերթառարդ գրողը: Մարդը. գինը 15 կոպ.: Ա. ՍԵՐԱՅԻՄՈ-  
ՎԻՉ—Պատմվածքներ. Պ. ՄԱՍՄԻՆ-ՄԻԲԻՅՅԱԿ-Մոծակի և արջի մասին.  
(պատկերազարդ). գինը 15 կոպ.: Պ. ՈՐԼՈՂԵՑ—Ճամբրորություն այերոպաւ-  
նով (պատկերազարդ) գինը 22 կ.: Պ. ՈՐԼՈՂԵՑ—Քիկիկոս կուզկան (պատ-  
կերազարդ). գինը 28 կոպ.: Ա. ԽՈՒՊԻԻՆ-Յերկրի խորքերում (պատկերա-  
զարդ). գինը 15 կոպ.: Ա. ԽԵՎԵՐՈՂ—Խոչպես ելին ապրում տիենիները և  
ինչ արեց արձին գինվորը (պատկերազարդ). գինը 16 կոպ.: Ա. ԿՐԱՎԶԵՆԿՈ  
—Ինչպես Սաքոն կարմիր բանակային դարձավ. գինը 35 կոպ.: Ֆ. ՖՈԲՍ—  
Մինիստր մեկ ժամով (պատկերազարդ). գինը 18 կոպ.:

Յ. ՌԱԴԻՆ—Պիոներ, պահպանիր առողջությունդ. գինը 10 կոպ.: Պ. Ռ.—  
Պատանի պիոներ (պատկերազարդ. ժողովածու): գինը 45 կոպ.: Պ. ԽԵԲ-  
ՆԻԿՈՎ—Կարմիրամրթները. գինը 45 կոպ.: Ս. Լ.—Գեղջկառին և յերեխա-  
ները: «ԹԻՉՈՒԻՆՆԵՐ»—Գունատիպ այլորմ մանուկների համար. գինը 20 կ.:

Դ ի մ ե լ՝ Կենտրիզդատ, Մոսկվա, Նիկոլյսկայա, 10.  
Կամ Յերեխան պատանի Փետրատի:



Հազարամյակի պատմություններ



NL0293188

ЧИС 30 ЧПМ

15890



---

Н. РУДИН

Язбука крестьянского  
землеустройства.

---

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва.

Никольская 10.